

հիւպատոսը կարգացող մարդ մըն է .
և երկար ատենէ ՚ի վեր օսմանեան
մեծազօր տէրութեան երկիրները կը
կենայ . անցեալ տարի գրեթէ այս ա-
տեններս Խզմիր կը կենոր հիւպատո-
սութեան պաշտօնիւ : և օսմաննեան
մեծազօր տէրութեան կառավարուեը
վրայ աղջէկ գիտազութիւններ ըրած և
տեղեկութիւններ ժողուած ըլլալավ՝
օսմաննեան բէրութեան ուրիշ բէրութեան կէտ
ունեցած հաշրտայսութեանը վայ գիլք մը
շինելու տասն տարիէն աւելի է որ
կաշխատէր , և գրեթէ լըմիցուցած
էր . մէկ մըն խալ ձեռքէ սննդնելէն
ետքը Ա իէննա պիտի խրկէր որ տըսկ-
ուի . Ա չա այս գլքին մէկ հատիկ ձե-
ռագիր օրինակին այրիլլ ամէն կո-
րուսաներէն աւելի ցաւ տուաւ Դը-
րապազունի աւըսդրիական հիւպատո-
սին :

— ՚ Բեղիկն եկած գրերը կը ծանուցանեն որ գետնաշարժը սր 1850 յունի վարի սկիզբները սկըսաւ, տակաւին կը տեւէ եղեր . օր չըլլար ո՞ր երկու կամ երեք անգամ գետինը չի շարժի . բայց ալլո՞ւ Հիւսէին գիւղեն զատ շարժէն վնասուած երեւելի տեղ մը չի կայ : ՚ Բեղի գիւղաքաղաքին և կեղեցւոյ պատին մէկ կողմէլ փլեր էր որ նորոգելու ետեւէ են . մէրիւելի գիւղն ալ տաճիկ լահնային տունը փլեր է շարժէն :

Քեղիի վիճակին գետինը հանքային գետին մըն է . ալուս հետեւին գիւղին մօտերը հանքային տաք ջուրեր ալ կը բղիւն քանի մը տեղ . և շարժէն ամենէն սւելի վիսա կրածը այս գիւղս է : Տեղ տղ գետիններ ալ ձեղքած՝ և այն ձեղքերէն պարզա հոտ ջրեր ելած տեսնուեր են . բայց չկ կարացինք տեղեկուի առն լթէ շարժէն բացուած և մէջէն ջուր շելած ձև լքերէն ցորեկը մուխ և գիշերը բոց ելլեւ տեսնուեր է մի . ասիկայ գիտող չեղեր : Այսու ամենայնիւ ձանցուած քանի մը պարագայներէն կը գուշակեմք որ գետին տակը բաւական ընդգարձակութեամբ տեղ հանքային նիւթոց խմորում մը պիտի ըլլայ . և այս խմորում մէս պատճառած գողորչիքները այս շարժերուո առիթ տուած պիտի ըլլան . կարելի է որ շարժին վերջը մէկ տեղաց մը հրաբուղին գայանալուլ լըմիննայ : Քեղիի լեռներուն նիւթերը բաւական նշաններ ունին կարծել տալու թէ այն լեռները մարտած հըրտուղիններէն են :

— Խղմիրու գաղլիսական լրագիրներուն մէկը՝ Ուատոսէն մարտի 6ին գըլքուած հետեւեալ նամակը կը հրատարակէ :

“ Փետրուարի 28ին իրիկուանի ժամ
5ին ասենները (փետրվար 16. ժամ
11½) գեանաշարժի սաստիկ ցնցում
մը զգացինք. որ մեր կղզւոյն մէջ շատ
երեւելի վնասներու պատճառ եղաւ:
Հաստ տուններու պատեր վնասուեցան,
և ձեղբուտեցան. մէկ քամին գրեթե
բոլորսին կործաննեցան. դարիսպին
քանի մը բուրգերն ալ (պուռածերը)
վնաս կրեցին. որոց մէկն էր արագ ժոհ-
վ ըսուած քառանկիւն բուրգը, որ
նաւահանդստին բերանը կը նայի. և
մէկ ուրիշ մըն ալ, որ քաղաքին գրա-
նը քով չնուած է: Այս վերջին բուր-
գը փլած ատենը՝ լուսորիսական ջրը ըն-
կերութեան գործակալին ընակարանին

վրայ ինչեւ, և այս ալ կործանեց ու
ձմէեց: Հարեբաղդ եմք որ կրնամք
ձեզ ապահովընեւ թէ այս ահաւոր
արկածէն բնաւ մարդու մը վեսա չե-
զաւ: Ոինչեւ հիմա շարունակ մանր
մունք ցնցումներ կ'իմանամք: բայց ա-
ռաջինէն շատ տկար են: Երերալը ա-
րեւմուտքէն դէպ ՚ի արեւելք է »:

քաւոծ է . և այն ճեղքերէն կալահան
(զիֆտի հոսով) գոլորչեք կ'ելլէ : Հա-
ջուրի աղբիւրներ բոլորալին ցամաքի
ցան . ուրիշքանի մը առջեր ալ նորե-
ջուրեր բղանեցին , որ առ աղջուց չե կա-
յին . Հօրեւդ վիճակին մէջ գրեթե
ամբողջ մէկ գիւղ մը կործ անեցաւ .
Եքինձիկ նաւահանգստին վրայի լերա-
նը կէսը վիւտ , Եքինձիկի առջեւի ծ-
վուն մէջ ինկաւ : Գիւտեաշարժը մի-
շեւ մարտի 5 (փետրվար 21) ծամեց

թիվ բարը բնակիչները քանի մը վաճառ
ու ականենքու նաև երաւ մէջ ապահնեց
ցան . և կ'աշխատին որ վլածներու
տուկը մնացած ինչըքերնին ազատեն ,
Ուստու և Արմի և ուրիշ մօտաւոր կը
զիները տանին : Հիւպատոսի մը վկա
խանորդին ընտանիքը գրեթէ հրաշըս
ազատեցաւ : Վայր կինը միաքը դրա
էր տղղը մէկը հետք աւնել ծովը ներ
վել . վտանգէն աղասաելու համար .
բաւ և աղասեցաւ : Տունը փրած ս
տենը աղջիկը տունն էր . և վլածն
ըուն տակը մնաց . շարժը քիշ մը մը
չոց տուաւ նէ գացին այն աղջիկն ա
ռջ առողջ անհեց աղասեցին : Ա
առտու (մարտի 7 . Գիւտրվար 23)
Ուստոսի մէջ նորէն ցնցում մը իմա
ցանք , բայց շատ թեթեւ էր :

— Ոուէզեն տեղայս գաղղիերե
տուիկ լրադրին կը գրեն փեարուար
15 մի : Քանի որ մենավաճառութիւն
շգիպատի նահանգէն վեցաւ , և վա
ճառականութեան ազատութիւն է
զաւ , Քառ.թում քաղաքը ծաղկելս
վրայ է . Անարէն և Վարչէն ներս

ըԵ՞ն եկած վաճառքներուն իր դերք
համար համբարանց մը եղած է . ու-
ափ Եւրոպայի տէրութիւնները որ-
շած են որ նոյն Քառթում քաղաքի
մէջ հիւսղատուական գործակալներ ու-
նենան , Քառթումի երկիրը ինքնի
բարեբեր է . հինա (քընա) զամբ արա-
և ոսկիի փոշի և փղսկիր (Փիլտիշ)
և ձիագետիի ոսկի և ուրիշ շատ բա-
ներ կ'ըլլայ , որոց միայն անունը բա-
ւական երկարութեամբ ցանկ մը կը-
նայ յօրիննել . և ասկէց զատ տեղն ա-
անանկ յարմարութիւն ունի որ , Եզ-
րիկէի մէջ ֆուանողներուն ձեռքը ւ-
ղած երկրին (այսինքն Շեղայիրի)
Այուէզի մէջ հալորդակցութիւնն ու-
կեգրուն կ'ըլլայ : Եյս հալորդակցու-
թիւնն ալ շատ մէծ օգուաներ կրն-
ընել հարաւային Վայրիկէի այս մաս-
քնակիչացը :

Այսուհետք պատմեցինք որ Հգիս
տոսի կառավարութիւնը միտք ուն
միջերկրական ծովին ու Խուճվի ծովը՝
է Կարմիր ծալք, իբրարու հետ միացը
նել. Եւ այս բանիս համար Պ. Սովոր
ֆէնալն ճարտարարուեսող հոն կա
չուած է. Այսոր տեղի կունեներուն նայ
լով այս երկու ծովուն հաղորդակցութ
ինչ Ճամբառվ ըստվ չիցան որոշել. Ա

ըսդէկառքի համար երկաթուղի շին
լով։ Աը կարծուի որ ջրանցք բանալու
կողմը աւելի զօրաւոր պիտի ըլլայ .
այս ջրանցքը Պ. Հոմեր ար չէ լի գ
ռանուղ իմաստունին ցըցուցած կե
պովը պիտի բացուի . որովհետեւ այ
պիտի բաներուս մէջ տեղեկութիւ
ունեցող վարպետներ տար կերպ
հաւնեցան։ Այս երեւելի ճանապար
հորդը , որ Փառանազի կողմէն վերը
անգ ամին պարսից երկիրը խրկուած
քանի մը պիտանի քննութիւններ ըն
լու համար Վասպից ծովուն եղերքն
ը , երկու տարիի մօտ է որ պարս
Դէհրան մայրաքաղաքին մէջ մեռաւ
Այս երկու կերպին որն որ սրոշ
նէ՝ բարձրագոյն գուռուր գիտաւորու
թիւն չունի գործագրութիւնը մա
նաւոր ընկերութեան մը յանձնել , ա
հիմաստուի կառավարութեան պի
առաջարկէ որ պէտք եղած ծախըքը .
գայ :

Առայժմ Սուեզէն մինչեւ Վլու
Ճամբան կը մաքրե՞ն մանր ու խոր
խիճերն ու քարերը անկէց վերցըն
լով. որովհետեւ այս Ճամբան տւ
զատ չէ. ինչպէս որ կրնար մէկը կա
ծել, այլքարոտ է. և քարերն ալ շ
կարծր են. Ճամբորդներուն համ
ուրիշ քարեկարգութիւններ ալ կ'է
լան:

EFSE-REFU LABOR

ԱՅԴԱՒՆ : | օռա Շօհն Որուա
տեսնելով որ կառավարութեան գե-
նզող կողմը ուժովիալու վրայ են ,
կառավարութեան կողմը քուէ տաւ-
ները կըքինան , պաշտօնէն հրամ-
րեցաւ : Խախարարներուն յողավա-
նախագահն ըլլալով բոլոր պաշտօնէ-
ներուն հրամարիլ կը հետեւէր .
կէց : Խնկիլիզի թագուհին հրամար
կանն ընդունեց , և | օռա Սդանլի
առասպըրեց որ նոր պաշտօննեայներ ըն-
րէ : | օռա Սդանլի կարող չեղաւ ըն-
րելու . ուստի թագուհին վ
լինեցն իշխանին հետ խորհրդակցել-
որ այս ալ | օռա Շօհն Որուսէլին և ն
խարարներուն հակառակ կողմն է
վերջապէս ասոր խորհրդավոր նորէն ն
խարարաց նախագահութիւնը | օռ
Շօհն Որուսէլին տուաւ . և այն ո
ընդունեցաւ . որովհախարարները Շ
րէն իրենց պաշտօնին վրայ հաստ-
տեցան :

— Տնկիլեզվ օրագիր մը կը պատս
Ուղթայէն հասած լուրերէն կ'իս
նսութ որ Քէֆալոնիայի մէջ յունիվ
12 ին մեծ շփոթ եղեք է կղզին կ
մէն | օնտուա խրկուած պատգամա
րին ետ դառնալուն առ իթովս . որ
նիսկան կղզիները յունաց թագա

բութեան հետ միացընելու խօսք ս
ված էր : Այս առաջորդկութեանն
ըստ էր որ յոնիական կղզիներուն մա-
նաւոր խորհրդական տառեանը քակու-
յաւ և վերցաւ : Քէ ֆալընիայի ո
մատականները մասնաւոր ժողովներ-
րին . և այս ժողովքներուս մէջ՝ ին-
չիդ տէրութեան յօնիական եօթն կի-
զիներուն պաշտպան կենալուն գե-
թչնամունք խօսքէր խօսուեցան : Են-
վրայ անմիջապէս ինկիրիզի սուրբ ըստվ
պատութաղմական նաւուր Քէ ֆալընիայ
Ուալթա կանչուեցաւ . ետեւ էն ալ՝ Ա
Ռէկյլէէմ Ռարքէր ծովապետին հր
մանին տակն եղած նաւերուն մէ-
ճամբայ պիտի ելլէ , կղզիներուն մ
կուսակալին օդնութիւն ընելու հ
մար որ այս ապատամբութեան խըլլ
տումը շուտով խափանի :

Ետ գարձած ատենը : Այս նաւը յուլիս 10ին հաղորդակցութիւն մը ունեցեր էր բջջէ նաւուն հետ , Զեմի սօ կզզին . ուր տեղ որ բջջէ նաւը անցած տարի մնացեր էր : Հաքը այս երկու նաւերը գէպ ՚ի հիւսիս առաջ գացեր էին մինչև լուս անանիկ սաւոյց ներու հանդիպեցան որ անոնցմէ անդին անցնելը անհնար էր : Այն ատենը էր հերեւ նաւը իր ընթացքը գէպ ՚ի ի իզպուռն հրուանդանը շխտկեց , Քուլինան նաւապետին նաւերը բնուղուելու համար . և նոյն ամսոյ 31ին ինչու բիշտր նաւուն պատահեցաւ , որ 26 օրուան մէջ Աէնավիչ կզզիներէն անցեր էր : Բայց հերեւ նաւը , որ ի իզպուռն հրուանդանին տաւածները կը պըտըտէր , հնկոտ մքեր 13ին նորէն բժջջէ նաւուն ետ գառնապետեսաւ . որ Պառուով ըստուած տեղէն կուգար : Ասոր նաւապետը Պ. Անուռ , Ճամբայ ըրած ատենը մակյիլ ինջնալով՝ սառուցեալ հրուանդանէն մինչեւ Պառուովի հրուանդանը օբքան կզզի կան նէտ ամէնն ալ ելքը էր և մանրախոյդ քըննութիւններ ըրեր էր . բայց Շօհը Ֆրանքլին նաւապետին համար բնաւաել գէկութիւնը մը չէր կարողացած առնելու : Պ. Անուռ նաւապետը և հետի եղաղ բոլոր նաւասահները ցրտայն սասակութենէն շատ նեղութիւն քաշած էին : Պ. Քիլէդ նաւապետը բջջէ նաւուն պատարը կատարելապէս հոգալին ետքը խրկեց որ ձմեռը Քըռուէնալի ծոցը անցընէ . որովհետեւ Զեմիսօ կզզին քոմիերը երկաթ նետելու աղէկ . տեղ չի կայ . և ինքն ալ առագաստները լցոցնելով նաւուն գլաւիք գէպ ՚ի հարաւ գարձուց Խիլիլթէռ առաջընկած համար :

ՈՒԽԱՍՏԱՆ : Առևսաց կայսրը
յուշվար 10ին գրած մէկ հրամանա-
գրով (աքաղալ) մը կը հրամայէ որ
առելեց ետքը թէ ձուլածոյ (սիւպիւ-
քէ) և թէ դրամ կոխուած (սիրքե-
լի) արծաթ բոլոր կայսերութեան երե-
րին սահմաններէն դուրս չի հանուի .
ոչ ծովալ և ոչ ցամաքով . և թէ նոյն
կանոնը է հաստանալ պահուի . Քին
լուսափայի մեծ զբառուէ մէջ ալ : Ոխայն
դուրս երկիրներէն արծաթ ռուսաց
երկիրը մանելուն , և ռուսաց երկրէն
թէ ձուլածու և թէ դրամ կոխուած
ոսկի դուրս ելլելուն թոյլուութիւն
կայ . և թէ որ մէկը այս հրամանին
դէմ արծաթ դուրս հանելու ըլլայ և
բռնուի նէ՝ բռնուած արծաթը տէ-
րութեան գանձուն առնուելէն ետքը
այն արծաթայն կրկնապատիկ գինն ալ
արծաթայն տիրոջմէն տուզանք առ-
նուի : Այս օրէնքս մեծ ազգեցութի-
ունի . Եւրոպայի վաճառանոցներուն
մէջ արծաթայն գինը և վելնալու պատ-
ճառ կըլլայ :

ԳԵՐՄԱՆԻԱ : 'Երկոյ տարւոյ
| օնուուայի հաշակաւոր հանդիսարանը
խրկուած նորելուկ արուեստացէն բա-
ներաւն մէջ՝ Պօհէմիացի Բրակա քաղա-
քէն հսն խրկուած մէկ զարմանալի ան-
կողին մը կայ . որուն համար ինկիլովի
օրագիրները նուագածու անկողին կըսեն :
Վարկոյ տակէն ծածուկ շինուած նու-
ագարան (չալլը) մը ունի : Վէկը մէ-
ջը պառկելու ըլլայ նէ՝ միայն մարմարի
ծանրութիւնը բաւական է նուագա-
րանը բանեցընելու . որ կ'ոկըսի մէկ
անուշ և ախորժելի եղանակ մը շա-
լէլ անանկ որ՝ մէջը պառկող մարդը որ-
քան որ քուն չունենայ ալ նէ՝ եղա-
նակին անուշութենէն կը թմրի . մէկ
անուշքուն մը կուգայ վրան : Վիկո-
զինին գլխուն վերի գին՝ նյոյն անկո-
ղինին կից մէկ ժամացոյց մը կայ . պառ-
կող մարդը ժամը քանիին արթիւնուալ

կուղէ նէ զարթուցիչ սլաքը այն ժա-
մուն վլայ բերելու և պառկելու է :
Երբոր նշանակեալ ժամանակը գայ ,
կ'սկըսի մէկ եղանակ մը չալել թմբու-
կի և չխպացի ձայնով . անանկ մեծ շա-
ռաջիւն հանելով՝ սր այն ձայնով չի
կրնալ արթմինեալու համար մեռած ը-
լալու է : Վսիկայ միանգամայն քաբեր
և զարթուցիչ անկողին մը կ'ըլլայ :

ԱԽՄԴՐԱՆ : ՎԵԿ յեղափոխական ապրանքամթեռն իսրհուրդ մը յայտնուեցաւ Ա ինձնայի մէջ անցածները (յունվար ամսոց մէջ,) և այս գաւակից յութեանս մլջ շատ մարդիկ ծանրվերապալ յանցուոր գոնուեցան : Քը սանի մը չափ մարդ բռնուեցաւ . որում մէկն էր զինուորական հրամանատար մը, որ զինուորութենէ հրամարուած էր իր ուղիղովը . շատ մը հարուսամարդիկ, որ Ա ինձնայի արու արձանեներուն մէջ կալուած (աքորեթ) ունեին, և անսակ մարդիկ ալ որոնք մօս ժամանակներս ասար պէս յանցանքավայր բռնուելով թողութիւն գտած էին Ա'կրետի որ այս գաւակցութեան ծայրը մինչեւ զերմանական դաշնակցութեան ծայրը մինչեւ զերմանական դաշնակցութեան ծայրը :

ԲՈՐԴԱՌԿԵԼ : Կառավարութիւն նը

նել, և ամէն՝ գաւառը մէկ կառավիրութիւնը ընել կ'ուզէին։ Վասր համացնդհանուր ժաղաքքին անօրինելով եկած էր հաճութիւնը հարցուեցաքննութիւնը ուղղված էրն եղան 10,2 հոդի ։ քննել պէտք չէ լսողներն եղաւ 16,620 հոդի ։ որով արմատականներու ուղածը եւս մնաց։ Վասր վրայ արմատականները նեղացան։ Աւ Օուկից բիթի քանի մը տեղերը կառավարութիւնը կարծանելու և իրենց ուղած կերպին գտարձնելու մոքք ապատամբութիւններ հանեցին։ Վա աջ (Օպէրլանդ) ուղարք ելոն։ կառավարութեան զօրք ասոնք շուտառվ զսպեց ։ եաբը Խնմէ լսքէնի մէջ գիշերավ ուղ ելան ։ քաղաքապետին պալատը կոխեցին։ և Պատլէու քաղաքապետը հրապէնութիւն վել նկուլ մը ծանր և վտանգաւոր վէրը առաւ։ Քաջօրդ օրը ապրուամբութեան կլսուորները՝ կառավարութեան մարդիկը հալածելու անկեց փախցընելու ելան ։ բայց երբ որ կանոնաւոր կրթեալ զօրք եկան, առանց երկար գէմ գնելու ամէնքն աց ցրուեցան։ Անդ Խմբէ ալ սուր ելան և թէ որ տեղական կառավիսրութեան մարդոց աշարքնութեամբը շուտ մը շաղառւեր նէ՝ շատ գէշ հետեւութիւններ կրնաք ունենալու ։ Հիմա հանգարաննեն, բայց ապատամբութիւնն հանելու աշարքնութեամբ մարդիկը որոց գործը առջերաներ չի աջաջազգեցաւ։ ՚ի հարկէ մէտեղը յարմար ժամանակի մը կ'ըսպասէն

ՅՈՒՆԱՍՏԱՆ · Յունաց կառ ավա-
րութեան խորհրդարանին մէջ՝ օսման-
եան մեծազօր աէրութեան երկիրնե-
րէն հնի գացող նաւերուն զգուշու-
թեան (քարանդինացի) համար օրու
շուած ժամանակը քիչը ըստել, իւլ խոր-
հին, և արդէն օրուշուածի պէս է որ
կասահնդընուպօվիսէն գացող նուե-
րը միայն 24 ժամ զգուշութիւն ը-
ստէն. Եզդապատճի և տարբեց երկիր-
ներէն գացող նաւերուն համար ալ
զգուշութեան օրէնքը չի փախուի :

ԱՄԵՐԻԿԱՆ : Նիւեօքքի օրոսկիրը
հիւսիսային Վայրիկայի լիճերուն մէջ
պատճառ ձախորդ աւ թիւններուն վր
ոյց հետեւեալ ցանկը կուտան : 1850
թուականին ամբողջ տարուան մէջ կոր
ուած նաւերուն համբաւդն է 170 . և
ոյս պատճառով մեռնազներն են 395 .
Դէյց պատճառած ած նիւթեական վեա
ը 558.036 թօլը կը հասնի . որ կընէ
2.934.414 Փա անը , կամ 12.911.421
տուառ շէն քիչ մը եվել : Այս ձախորդ
որդաններուս մէջ 32 նաւ , որոց 10
առար շոգէնաւ և 22 համար առագաւ
առայ նաւ էին , բարոսին ոչընչա
րան . մասցած 138 նաւը , որոց 21 հա
ը շոգէնաւ և 117 համար առագաւ
առար էին , վիասուեցան : Ո՞ւսնող
95 հոգին 375 ը շոգէնաւերու մէջ
և 20 ը առագաստաւոր նաւերու մէջ
ին : Ըստէնաւերն էին իշխիլ , որ
60 հոգի կար մէջը , և այրեցաւ . ու
յն , որուն մէջ 65 հոգի կային . վա
օդի ամբարանսցը բաշնեկելով օդը
ետուեցաւ , և ծավի ինկաւ ընկղուե
աւ . քօմեր , 38 հոգւալ . որ ուրիշ
առաւ զարնելով ընկղուեցաւ . ամերիկա
1 մարդով . ուրիշ , 9 մարդով . բաշնել
կ մարդով , որոց վաս օդի համբարա

ով, որ առաջնականութեանէ ըսկզբմեցաւ :
Նացած 20 հոգին առագաստաւոր
ուերաւ վրայ էին . այսինքն, 7 հոգի
բերեան լսուած շունչան նաւուն վրայ որ
ակն ՚ի վրայ եղաւ . մէջինները ջուրը
ափեցան : 7 հոգին մարդան ֆրեմ նա-
ւն վրայ, որ ալէկոնցութեամբ ըն-
դմեցաւ . 4 հոգին ճէնէռու բօնընդըն-
ուուն վրայ . որ այն ալ ալէկոնցութիւ-

ընկղմեցաւ . և երկու հոգի ալ երկու
մակակի վրայ . որ ընկղմեցան չուր-
առնելով : Այս հաշիւներէս կ'երեւ-
որ՝ շոգէնաւ , Յ նաւ և Յ մակա-
մէջի մարդիկներովք կարսուեր են . որ
ամենը կ'ընէ 12 նաւ ու նաւակ : Ո՞ր
նացած 158 նաւերուն վտանգելովք մէ-
ջի մարդոցը վեսա չէ եղեր :

— Իմեւ օրբի մէկ օրագիր մը ապր-
ւոյս յունվարի մէկին՝ իւր բաժանորդ .
ներուն մէկ արտաքոյ կարգի թիւ մը
թերթ խրկեր է ընծայ : Այս թերթը
շրաբ ծալլուած էր . բարձրութիւնն
էր 1 հետք և 64 չուրտիմուրք . և լոյնու-
թիւնը 5 հետք և 40 չուրտիմուրք : Թէ բա-
թին ութը երեսին ամեն մէկը 11 ա-
կան էջ ունէր . թերթը ամենը մէկէն
88 էջից պարունակէր : Ամեն մէկ էջը
միջին հաշուալ 275 տող . և ամեն մէկ
տողը 50 գիր ունէր . որուն ամենուն
գումարը կ'ընէ 24,200 տող . և 1,210
հազար գիր : Այսքան տող և այսքան
գիր՝ սովորական ութածալ գիրքալ վեց
հատոր գիրք կ'ընէ : Թէ որ առանկ օ-
րագիրներ ամեն օր ապաւին նէ՝ կար-
դացող ով կը գտնուի : Եւ օրովհետեւ
անհնար է ամեն օր այսքան բան կար-
դալ , ասանկ օրագիր մը հանգը իւր
օրագրին անունը չ իւրայս-ել - զընէ
նէ կ'ըլլայ :

U.S. GOVERNMENT

— Արտեւատից վրայօք մերազգի
անհատ անձինքներուն ունեցած ճար-
տարութիւնը ծանօթ է . ամէնքն ալ
գիտեն որ՝ Եւրասպացի ճարտարներուն
շնուած բաները ահանելով, իրենք ալ
անոնց նմանը կրնան շնոել: Բայց շնո-
ւած մէկ բանի մը միայն պատմու-
թիւնը լսելով, շնուելուն նիւթը ինչ
ըլլալը չկ գիտնալով՝ միայն մասնու-
թեամբ այն նիւթը գուշակել և այն
բանը շնոելը արտաքայ կարդի չէ թէ
միայն ճարտարութիւն, այլ և մուց
հանձար ունենալ կը նշանակէ: Մտեն
մը Եւրասպա բամբակէ վառող շնուել
հնարուեցաւ . ինչո՞ւ և ինչպէս շնոելն
հնարուղը Եւրասպայի վարպետներէն ալ
պահեց, կարծելով և յուսալով որ այս
բաղանիքը սորմիելու համար աէրու-
թիւններէն մէկը չէ նէ մէկ ուրիշը
վարձք մը կռատայ, և ինքը կը հարրա-
տանայ: Բայց գիրերը ասոր միայն ասի-

ասկան նիւթը և քանի մը յատկու-
թիւնները ծանուցիր էին : Արքունի
խռովագետ Տատեան պերճաշլք
Յովհաննէս ամիբայցին որդին ազնուա-
գան Յարութիւն աղայն՝ որ ժամանակ
ը Փարիզ կենալով ապրալութութիւն-
քիւթիքա) սորված էր, այն գիտութե-
կզրուելքովը այս վասօղիս բաղկացու-
ցիչ մասունքները գուշակեց . փորձը
որաւ, որ կատարելայաէս յաջողեսուա-

Այս ճարտարաբութենէս վար չի մը.

ար այն, որ ինկիլիզ վարպետաներուն
ինած մէքենայն աւելի դիւրին գոր-
ածութեան բերէ . աւելի սարզէ և
ուելի կառարելադորձէ : Մէքենային
ողէկութիւնը երկու բանի վրայ կը կա-
յանայ, Ա. Քաջկացուցիչ մասունքնե-
րը որքան հնար է նէ քիչ ըլլայ , սրավ
ուտ շարուիր . և աւրուելու ըլլայ
է նորոգելլ դիւրին կ'ըլլայ : Բ. Որ-
ան հնար է նէ դուրսէն քիչ ուժի
արօտ ըլլալով շատ մը ուժին տեսած
անը տեսնէ : Երու ալ գործածութե-
ղմէն ծախքի ինայութիւն կ'ըլլայ .
ովհետեւ մէքենայի մը դուրսէն ուժ
ալլ թէ զոլորշերով (վարուով) ըլ-
լայ , և թէ ջրայ վազելուն ուժովը կամ
կոլ և այլն, միշտ ծախքի կը կարօտի :
անակ կատարելագործութիւնն մըն ալ
առութիւննէի մէքենայներուն վրայ
գործ դրաւ հանձարեղ աղնուախն
առքել աղայն Տատեան . Վ առօդ ծե-
լու համար Ինիիթէ ուռայէն եկած

շորս անիւներուն (չարիսերուն) երկուքը վերցուց . և տոփանը (աինկը) աղացքը դարձնող անիւներուն մէկուն աղօաններուն յարմարցուց . որով մի և նոյն անիւը իրեն հորիզոնական դարձուածքով աղացքը կը դարձնէ . մէկ դիէն ալ տոփանը կը շարժէ . որով երկու գործ մէկէն կ'ընէ : Կոյն հորիզոնական անիւը առաջ փայտաշէն ըլլալով գիւրաւ . կը մաշէր կամ կսարէր . նորոգելու համար ժամանակ կանցնէր . ծախը կ'ըլլար . և բանուորներն ալ պարապ կենալու կը սափուէին . առնց ալ նոր փափոխութիւն տուաւ աղուաները բուճէ կամ բէրնճէ շինելով . և այս խելացի գրութեանս վրայ նոր ջաղացը մը կը շինուի վառօդ ծեծելու համար , առաջնէն աւելի մէծ . և վառօդ աղալու գործիքը աւելի ծանր . որովհետեւ ամեն մէկ հատը 15.000 հօմայի չափ ծանրութիւն ունի : Այլ եւ տոփանը շարժած տունը դուրս եւ լած գոլորշիքը՝ որ ներսը մնար նէ ուժոյ առաւելութիւն մըն էր , դուրս ելլալով անօգուտ տեղը կը ցընէիք : Այս գոլորշիքը ներսը պահելը անհրաժեշտ ըլլալով՝ դուրս ելածը մտածեց ժողվուլ . և յարմար խոզվակներով ջրաց մէծ շաեմարտնին (հաւիւղին) արվաւ . որով ջուրը շատ կը տաքնայ . և ասով ալ վասելու և ջուր տաքցնելու նիւթոյն կողմանէ շատ խնայութիւնի կ'ըլլայ : Վառօդ մաղելու գործիքներուն մէջն ալ կատարելութիւնի մը մըտցուց . որ վառօդարանի վասանգաւոր գործերուն մէկն է . որովհետեւ մաշիքն անցած ամենաբարակ դիւրտվառի խցիւները անդադար օդոյն մէջ կը ցընէին . և ինչն իցէ պատճառաւ կրակ առնելու բռընկելու ըլլան նէ խիստ նէծ և զարհուրելի վիսաներ կ'ընեն : Մաղին անիւները մաղին վրան էին . և զարդիկ ըլլալով հարկաւորապէս շարժու միին խիստ արագ կ'ըլլար . և յայտի է որ մէկ մարմին մը որբան արագ արժի նէ այնքան շուտ կը տաքնայ . նոյտաշէն անիւներու գտանալն իրէն առնալուն արագութենէն բռընկիլլու տեսնուած է : Դարտարամիտագործ տվարը ասոնք մաղին տակը առաւ . ջրոյ ընթացք մը յարմարցուց այս նիւներուն վրայ , որ շարունակ վրանին ջուր կը վագէ . որով որբան շուտ առնան նէ՝ տաքնալու և բռընկիլլու առնանք երկիւղ չի կայ :

Համես համարեղ անձ մը ինչ
անի որ առաջնարդութիւնէ լընէ՝ յայտնի
որ ճարտարութեանը արդիւնքը իւր
ործոյն մէջ կըցու ցընէ. ինչպէս որ
բիշ գործարաններու մէջ ալ տեսնիր
ած է: Ա առ օդարանի գործիքներուն
որ կատարելագործութիւնները եւ
որպայի վարպետներ ալ տեսան և շատ
ունեցան. մինչեւ անգամ կաստան-
նու պօլոց ժողովական լուսագիրը սախալ-
եցաւ բաւական ընդարձակութիւնը
օգուտած մը գրել այս բանիս վրայ:
ոցաւիմք որ նոյն լսագրին հրատա-
սիիներէն կամ ծանօթներէն մէկը¹
ամանակին Խղմիմիտու չափայի գոր-
որանը և Հէրէքէի մետաքսեայ ձե-
ադործուներուն գործարաններուն մէջն
ած, որ այս գործարաններուն մէջն
Ոիշեալ ճարտարին ցուցուցած ար-
ևնքը նոյն լսագրին մէջ արձանագրը-
ր: Յիբաւի հիմակուտան արդիւնք-
ոն ալ գովելի բաներ են, ինչպէս որ
կեց առաջ նոյն ժողովականը առնելով
ած եմք, սակայն հիմադրին և ա-
զին վարպետին արդիւնքը մոռցը-
լու բաներ չեն, արդարութիւնը կը
հանջէր որ՝ չէ թէ միայն ներկայն
ժանաւոր գովելստիւ հոչակուի.
և առաջներն ալ իրենց արժա-
ցած գովելստէն զուրկ չի մնան:
Ծցնուական Առաքել աղայն Տատ-
ոն՝ իւր նախնեաց պայծառ անունը
գիս մէջ և օտար աղգաց առաջը շա-
նակեան համար շահ և ան առ առ առ առ

տանը արժանաւոր ժամանգ մըն է :
Վմենուն յայտնի է որ բարեյիշատակ
հանգուցեալ մահաւեսի Վրաքել Տատ
ամիբայն, որ այս ցեղիս և տանս փա-
ռացը հիմնադիրն է, ամանեան սուլ-
թան Ալլմ Գ. Թագաւորին օրը նախ-
կին հիմնադիր եզաւ չէ թէ միայն վա-
ռագարանի, այլ և չուխոցի գործա-
րանի ալ: Չուխոցին գործարանը ետ-
քը խափանեցաւ ալ նէ՝ նորին որդի
պերձաշուշք Յավհաննես ամիրայն վե-
հափառ ինքնակալին հրամանաւը նո-
րէն յարդարեց Եւրոպայի նոր գրու-
թեան համեմատ, Եւրոպայէն վար-
պեաններ բերել տալով, և ինքն ալ եր-
կու անդամ այս բանիս համար Եւրո-
պայի երեւելի քաղաքները ճանապար-
հորդելով: Ա առօդ գործարանին ալ
շգէշարժ մեքենաններ բերելով մեծա-
մեծ կատարելութիւններու հիմնազիր
եղաւ: Թէ առաջ, և թէ մասնաւենգ
հիմա, այս գործարաննէս ելած վասօ-
դը Ինկիլթեռուա շինուած պինա պա-
տուական վառօդին: Հաւասար կու-
գայ: Նորին եղբօրը հանգուցեալ Ար-
մոն ամիրային որդին պերձաշուշք Պօ-
զս ամիրայն Տատեան՝ նայն վասօդ ց
գործարանին գեղեցիկ անտեսութիւ-
նութիւն իր հանճարեղ գիւ-
տերովք և կատարելագործութիւննե-
րով իր նախնեացը և իրեն փառքը և
պարծանքը կ'եվելորնէ:

— Աստենապէտ անձանց յայտնի է որ
ժամ և ժը դարերուն մէջ եւրոպացիք
ամէնը մէկէն սովոր. ելան սուրբ երկիրը
արաբացւոց ձեռքէն տանելու . և այն
ժամանակին երեւելի պատմական գիր
պուածներուն երեւելին այս է . որուն
մէջ ֆրանսըները առաւելապէս ձեռք
ունեցած ըլլալով, հիմակուան ֆռան-
սըզ երեւելի գիտնականներուն ալ մէկ
նիւթ մը եղած է այն ատենաւան ճիշգ
պատմութիւնը հին յիշատակարաննե-
րէն հանելով գրել:

Պ. Խառուարտ Տիւլսոիէ գիտնականները, որ Փաբիլով՝ տախտական կենդանի լեզուաց յատուեկ գործառնութեանը մէջ Ապահովութեան և Շավամնէղ լեզուներուն դասատուե է, և հայերէն լեզուին մէջ ալ աղջէկ վարժութիւնը մեզ գրած հայերէն գրաբարը մէկ նաև մակէն ըստուգած եմք, իսաշակրաց պատմութեան վրայօք յիշատակարաններ ժողովելու ձեռնամուխ եղած է, և այս առիթով, և իրեն ձեռնամուխ եղած գործոյն մէկ ճաշակը ցուցընելու համար ուռ հայեցի Ապահովութիւնը եւ

ჭერების պատմութեան մէջ ქადაგმა-
ნեր և հմուտ ծանօթութիւններով
գաղղիերէն տպագրեր է միայն այն
մասը որ անմիջապէս խոսչուկրաց պատ-
մութեանը կը վերաբերի : Այս գործո
ինչպէս որ Պ. Տիւլութիէ ինքը կը գրէ
նայն գրքին յաստաջաբանութեանը մէջ,
մինչեւ հայոց Ծ. և Ք. մի 1111 թուա-
կանը հայերէննեն գաղղիերէն թարգ-
մանած էր .Պ. Շահան Պ. բայետեան
հայազգի գիտականը, որ Փարփառ-
ասիական կենդանի լեզուոց ըլլարա-
տունը հայերէն լի զաւի գատառու էր :
Բայց ասոր լնադիր բանած օրինակը
շատ տեղեր սիրալինը ունենալով՝ ան-
հրմուտ օրինակողի գործ ըլլարուն հա-
մար, ի հարկէ թարգմանութիւնն ալ
չէր կրնար ամենայն մասամբ օխտանե-
քէ զերծ մնալ . և ասիէց զատ՝ շատ
տեղերն ալ կամաւ երեւելի հատու-
ածներ գուրս թողուցներ էր, որ խա-
չակիրներուն պատմութեանը կը վե-
րաբերին : Պ. Տիւլու իէ Փարփառ աղ-
գային մատենագրաբանին մէջ գանուած
ձեռագրին չի վատահելով, որ Պ. Շա-
հան ջրակտեանին թարգմանուելը ըս-
կզբնազիրն էր . Ա էնէ ափէ միսիթարեան
բաղմարդ իւն միաբաններէն մաքուր օրի-
նակ ուղեց որքան տեղին որ գաղղիե-
րէն թարգմանութիւնը հրատարակել
կ'ուղելը . անոնք ալ անցաւզաղ օրինա-
կեցին . և վանքին մատենագրաբանը
գտնուած չըրս ձեռագիր օրինակնե-
րու հետ բազգատելով մաքրեցին և
Պ. Տիւլութիէն խրկեցին, որ հոս պատ-
մած թարգմանութիւննիւր ըրաւ :

Այս գրքին մէկ օրինակին հետ մեզ
վի խրկած գաղղիերէն նաևն կին մէջ զ. ։
Տիւ լոն իէ կ'ըսէ . ։ Իմ աշխատաւթիւն
ուրիշ բան չէ , բայց եթէ մէկ ուրիշ
մեծ գործոց մը բաղրաւած , որն որ կը
պատրաստեմ կոր խաչտիրաց պատմու-
թեան վրայ ; Հայ հեղինակներուն հե-
տեւութեամբ , արդէն երկար և հե-
տոքքրափական հատուածներ քաղած
եմ : Հայ հեղինակներուն պատմու-
թիւնները սիխի պարզաբանեմ և պա-
կաններնին լցունեմ արաբացի հեղի-
նակներէն , և մեր արեւամեան ժամա-
նակագիրներէն : Եւ վերջապէս ռու-
բինեանց թագաւորներուն և փրանիկ
թագաւորներուն մէջ եղած իշանակ-
ցութիւններուն պատմիերը պիտի գը-
րեմ մինչեւ լէսն Զ. ին օրը , որ ռու-
բինեան վերջին թագաւորն էր . և վեր-
ջերը Փարփղեկաւ Արարուլա Զ. ին ար-
քունիքը . շատ աղէկ ընդունելութիւն
գտոււ . և հոն մեռաւ : Վմէն ձեռքէս
եկած ջանքը պիտի ընեմ՝ որ այս գոր-
ծով ձեր աղդին փառացը , միանգա-
մայն և ինձի արձան մը կանգնած լը-
լսամ : Վմէկ գիտեմ որ ձեր աշխարհին
մտածնագիտութիւնը մէկ բազմար-
դիւն հանք մըն է , որն որ տակաւութիւն
Եւ բոլոյի հաստրակաւթեան անծա-
նօթ է ո . ինչ աղէկ կ'ըլլոր որ հին
պատմիշներն ալ , որմնցմէ մէկն է Պը-
լւտարքաս , իրենց պատմութիւնները
շինած ատենաին երբոր հայոց վրայ կը-
խօսէին , հայոց պատմիշներուն ալ բան
հարզընէին : Վիրքերնուն մէջէն ասով
շատ սիսալ տեղէկութիւններ պակաս
կ'ըլլային . և հիմակուան պատմիշներն
ալ որ յօն և հոռանցեցի պատմիշնե-
րու տարապայման հաւատոք ընծայել
մը ունին , նոյն սիսալներուն մէջ չէին
իշնար : Հիմակուան եւ բոլոյացիներուն
շինած պատմութիւնները գովելի են .
որովհետեւ ամէն աղդի վերաբերեալ
տեղէկութիւն նոյն աղդի պատմագիր-
ներէն քաղելով . հանելու սէր ունին .
բայց ամէնը ասկաւին առանկ չեն . և
առաւելապէս հաօարակաց ուսման
համար շինուած պատմական գիրքերը
օտար աղդաց վրայ գրած առենին հին
յունաց և հռոմայեցոց պատմիշնե-
րէն քաղելով . անոնց մէջն սիսալները
ասոնց մէջ ալ անցած են . և հասա-

բակութեան մէջ մտած նախապաշարութեանը կը տածեն . որ մտքերնուան մէջ արմատանալով՝ բազմահմատ մարդիկ անդամ այն սխալները ձգել չեն ուղեր :

— Պ. Տիւլութիին հայերէն գրա-

բարի վարժ գրիչ ունենալուն մէկ աւպացսց մը ըլլալու համար անսր գրած մէկ նամակէն հետեւեալ յօդուածը կ'ունեմք . որովհ նայն երեւելի գիտ նականին վարժ ըլլալին զատ այն ալ կը հասկըցուի , որ մեր այս հայաստան լրագրուն ազգացին հասուածներուն մէջ տուած տեղեկութիւններնիս եւրոպացի գիտնոց ալ ընդունելի եղեք է :

“ Անթերցաց փութով և բերկութեամբ զերիս թիւս հայաստան լրագրիդ զսրս ինձ հասուցէք . և առաւելապէս զյօդուածն որ մակագրեալ է կի՞ն յիշապահանք . այդ է գովիլի . և օգտակար աշխատութիւն . և նորին գաղղիական թարգմանութիւնն յօցք . հաճոյ եղիցի ընթերցողաց օրագրի ասիական ընկերութեանս ՞ :

10. The following table gives the number of hours per week spent by students in various activities.

ОБЩЕСТВЕННЫЕ

Հայութեա բժիշկ։ Խնկիլսղի Շաց-
մաւթք քաղաքէն բժիշկ մը՝ իր տանել
զանդակին դանէն գուրս հանած չու-
անին քով։ հեռախօսութեան փող մը
դրաւ . որուն նիւթն է կուլու բերլա-
ըսուած խէմը, որ կօմա էլսութիւնն իր-
ման առածքական բան մըն է . Ասոր
ծայրը մէկ երկան խոզպակ մը ըլլալով
կը հասնի մինչեւ մահիձին (քառեօ-
լային) սոտքին կողմը։ Վիշերը երբ որ
հիւանդի համար իրեն կուգան, զան-
գակին չուանը քաշուելուն պէս այս
խոզպակին մէջն բժիշկը ձայն կը հա-
նէ . որ մինչեւ դուռը կը հասնի . ե-
կողին ինչ ուղելը կը հարցընէ . հիւան-
դութիւնը կ'իմանայ, դեղը կը զրուցէ
և մարդը կը ձամբէ առանց անկողի-
նէն ելելու և մարդուն երեսը տես-
նելու .

Ծիէ որ այս բանս մէկ փաստաբան
մը կամ դատաւոր մը կամ ուրիշ ասոնց
պէս մէկը հնարած ըլլար նէ՝ հնարու-
ղին օգտակար կ'ըլլար և ուրիշին ալ
վեաս չէր ըլլար . բայց բժշկականու-
թեան մէջ ասանկ գիւտ մը կ'երեւել
որ աղէկ մէկ բան մը չէ . միայն բժիշ-
կը գիշերուան օդէն պահել կ'ըլլայ որ
հարբուխի (նէվազիլի) չի բռնուի .
հիւանդին օգուտ ընելչն զատ վեաս
ալ կ'ըլլայ : Հիւանդին դէմքը տեսնել-
լու է . բաղկերակը զննելու է . կուրծ-
.քին վիճակը և չնչառութեան գործիք-
ներուն հանդամանքը հատկընալու է .
հեռախոսութեան խոզվակը ասոնց
մէկուն ալ օգուտ ընելը , ասիէց կը
կործեմք որ այս գիւտ խելացի բը-
միշեներուն մէջ չի տարածիր . և երբ
որ տարածի նէ՝ հիւանդները այն ա-
տենը պէտք է որ բըմշուց օդնութե-

— Պահող-ըդուռ : Փարփառ մօտերը
մէկ բերդ մը կայ այն ժամանակէն մը
նացած՝ որ ամեն՝ մէծամեծ մարդիկի
մէկ մէկ բերդ ունէին, և այն բերդին
թագաւորը չէր խառնուեր. ամեն կեր
պովլ պահպանութիւնը իրենց ձեռքին
էր, զօրք և ուրիշ պատերազմական
բաներ ալ ունէին. պէտք եղած ժա
մանակը քանի մը զօրքովլ պատերազմի
երթալու, և թագաւորը իրենց գե
րագոյն իշխան ճանչնալու պարտաւո
րեալ էին. բայց շատ առեն ապահով
բութիւն ալ կը հանեին իրենց օրինու
որ թագաւորին դէմ : Այս բերդը լր
ժառանգութեամբ որդէնոց որդիի այն
ցեղէն մարդու մը ինկաւ . որ ասկէց
քսան տարի մը առաջ իր աղջիկը մէ¹
ուրիշ ազնուական անէ երիտասարդի
մը տապօռ ըլլալով. հարսանիք բռնեց
կէս օրէն հաշուելով ժամըստին հարս.

Նեւորները ժամանակ անցընելու համար պահութափ խաղալ ու զեցին . ու մանք պահուելու , և ուրիշները պահուածները վնասը եւ դանելու կանոնը մէկ ուրախալից զբօսանիք մը եղաւ մինչեւ մէկ ժամ . անկէց եաբը ամէն մարդ իրենց սպառական տեղը քաշուեցան . հարս ըլլալու աղջիկէն զատ : Ժամ մը երկուք անցաւ . երբ տեսան որ հարսը երեւան չէլլեր , փրն տըռեցին . չի գտան : Կարծեցին թէ աղջիկը մէկը առած փախած ըլլայ . ուստի ամէն կողմը ձիաւորներ հանեցին . գտնելը անհնար եղաւ . հարսը չի գտնելով հարսնիքն ալխափանեցաւ :

Այս ատենան բերդին տիրողը սիրա-
տը վախ մանելով չի կրցաւ բերդին
մէջ կենաւ, մէկ սպասաւորի մը ձեռք
ձգեց . այն ալ խնամք չի տանելով՝ օ-
րէ օր բերդը փլչելով քակուելու վրայ
էր . մինչեւ որ այն մարդը մեռաւ .
բերդը ժառանդութեան օրինօր ու-
րիշ մէկու մը անցաւ . այն ալ պէտք
եղած նորոգութիւնները լնելու հա-
մար որմնադիրներ (տուվարձի)՝ Կըր-
կեց : Վստե՞ք ասանը վերնացարկը բանած
ատեննին, որ առաջ հնմ մարդ չէր բը-
նակեր, հին սնտուկ մը գտան . բա-
ցին . մէջը միսերը փառած և թափած
և միայն ոսկորները մնացած մարմին
մը գտան, և կնիկ մարդու հագուս-
տի կտորաւանք, և ականակապ զար-
գեր : Դանցուեցաւ որ այն ատեննը պահ-
վըստուք խացօղ հարսին մարմինն է ե-
ղեր . որ գացեր պահուելու համար
այն սնտուկը մասեր գոցուեր է . և օգ-
չի բանելէն խեղդուեր մեռեր է : Ոլն-
տուկին կղզանքն ալ նացեցան . այն տե-
սակ կըղզանքներէն է եղեր որ ինքնի-
րեն գոցուելէն ետքը տունց բանալի-
քի : Հացաւելուն համար ներսէն բա-
նալը բոյսորակին անհնար է :

ՕՐԵՈՒՅՑՈՒՄ

Ա Դ Ա Վ Ո Ւ Խ Ի Ա Շ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ
Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ Ա Վ Ո Ւ Խ

ԱՐԴՅՈՒՆ

Ղրագրոս անցած շաբթուան 57
թերթին վերջին երեսին երկրորդ է-
չին ձականտի խորագիրը, որ գլուած
է պատմութեան ջահեց կայութեանին, պիտի

ACCEPTED

ԵՐԱԳՐԻՍ

Արտապահ Յանձնել.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԵԱՆՈՒ ՄԻՒՀԵՆՏՄԵՆ
ՀԱՅՈՒԹԵՒ ԵՎ